

Ու տօնելու՝ ճերմակին փառքն այս ձիւնեղէն,
Որ կապոյտին կը լըծորդուի հորիզոնին,
Ու կանչելու համար հոգւոյս մէջ վերըստին
Ճերմակ հոյլ մը վաղընջական անուրջներէն,
Ու ծիածան մը գոյներէ վայրավատին:

12. ՄԵՌԵԼՈՑ

Զըմեռ օր մը, ձիւնին մէջէն, մի՛ս մինակ,
Զիւնին մէջէն, տարի դամբանն իմ հոգւոյս,
Ժըպիտով մը ծընած նախկին սեր մը կոյս.
Ըսպիտա՛կ վարդ՝ որ սառեցաւ ձիւնին տակ:

Գարուն մըն էր, եւ համբոյրով մը բացուած
Դամասկեա՛ն վարդ, գինով արփին գաղջ գուլէն,
Նըւաղեցաւ ուրիշ սեր մը. սէ՛րն, Աստուա՛ծ՝
Զոր թաղեցի՝ յուսատ՝ կեանքին կանչելէն:

Ամրան վերջն էր, նայուածքով մը բողբոջած
Դեղին վա՛րդս ալ ինկաւ աշնան շունչին տակ.
Զայն վերցուցի՝ արդէ՛ն եղած յիշատակ՝
Ու նետեցի փոսին մէջ, ցա՛ծ, ա՛հ, շա՛տ ցած:

Չիմակ ամէն մեռելոցի ես կ'երթամ
Անոնց մարմար դամբանին վրայ ցրտաշունչ,
Աղօթքով մը, կորած մեզին մէջ տարտամ
Անոնց յուշքին, մըտաթափառ, լուռ ու մունջ:

Ու մըտածումս ալ, հէ՛ք նժդեհ քահանայ,
Խաչ հանելով կ'ըսէ բառեր լուսեղէն.
Ու նայուածքըս կը բաժնըւի երբ հողէն,
Չոգիս զանոնք անգա՛մ մըն ալ կը մոռնայ...

13. ԵՐԿՈՒ ՍՐԻՆԳ

Սըրինգ մը կայ մէջն երկդիմի այս առտըւան,
Ծայրիի մեծ ծառին դիմաց ու փըլուզակ
Մոլոշագոյն որմին ներքեւ. սըրինգ մը որ
Կը սրսըփայ ցաւը լոյսին, որ չի՛ ծագիր...